ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 2 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով «Ամիրա Պալաս» ՍՊԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

1. «Ամիրա Պալաս» ՍՊԸ-ն 13.05.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ եւ 36.2-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետեւյալին.

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ եւ 36.2-րդ հոդվածները կիրառել է այնպիսի մեկնաբանությամբ, որը չի բխում վերոնշյալ նորմերի իրավական բովանդակությունից, հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, ինչպես նաեւ նման

մեկնաբանությամբ հիշյալ նորմերը չէին կարող կանխատեսելի լինել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար:

Դիմողը փաստել է նաեւ, որ. « …թեեւ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ եւ 36.2-րդ հոդվածներն իրենց բովանդակությամբ համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, սակայն ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը հիշյալ նորմերը կիրառել է այնպիսի մեկնաբանությամբ, որոնք հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքին, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավական կարգավորմանը»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներում նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձեւական պահանջներ, իսկ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Մինչդեռ դիմողն ընդհանրապես որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ: Դիմողն ընդամենը մեկնաբանել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը՝ մասնավորապես նշելով, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն անհիմն կերպով զբաղվել է իրավաստեղծագործությամբ՝ ընդլայնելով վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը եւ ըստ էության սահմանելով նոր պարտականություն, եւ հիշյալ նորմն իրավակիրառ պրակտիկայում ձեռք է բերել հակասահմանադրական բովանդակություն, որը եւ հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 42-րդ հոդվածներին:

Դիմումի ընդհանուր տրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական

դիրքորոշումը՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Բացի դրանից, դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրակա-նության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատա-րանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Ամիրա Պալաս» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

2 հունիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-5